

## Կ Ա Ն Ո Ն Ք

### Մ . Ս Ս . Հ Ա . Կ Ա . Յ

Ս . ՆԵՐՍԷՍ Պարթևի մահը (373ին), անկումն և քայքայումը եղաւ Հայաստանի կրօնական և բարոյական փայլուն վիճակին, ուր հասուցեր էին Ս . Լուսաւորչի և իր արժանաւոր որդիներուն և թոռներուն գերմարդկային ճիգերը: Իսկապէս զգուանք կը զգայ մարդ, երբ կարգայ Փ . Բիւզանդի պատմութեան մէջ, չափազանց մտայլ գոյներով պատկերացած, Պապ Թագաւորին՝ աւելի քան ոճիր ըսուելիք՝ վատ և զարշելի գործերուն նկարագիրը, որ կը սկսի հետեւեալ խօսքերով. «Իսկ թագաւորն Պապ, զի թէպէտ և սպան զհայրապետն աշխարհին Հայոց զՆերսէս, սակայն ոչ յագեցաւ մահուամբ նորա, այլ ջանայր այսպէս՝ թէ զինչ միանգամ կարգը իցեն ուղղութեան ի Ներսիսէ եղեալ յեկեղեցւոջն՝ եղծցէ և խանգարեսցէ<sup>1</sup>»: Իրապէս Ս . Ներսէս ծաղկեցուցեր ու զրախտ մը դարձուցեր էր Հայաստանը, բոլոր գաւառներուն և նոյն իսկ աւաններուն մէջ հիմնելով վանքեր, կուսաստաններ, հիւանդանոցներ, աղքատանոցներ, հիւրանոցներ, ուրկանոցներ, մասնաւոր հոգաբարձունքներու հսկողութեան տակ, և զրամական նպաստներ յատկացուցած անոնց, որպիսիներ հազիւ կը տեսնուին ներկայ դարուս ամենէն զարգացած երկիրներուն մէջ<sup>2</sup>: Այսպէս նաեւ հայ մանուկներուն, պատանիներուն ու երիտասարդներուն ուսման ու կրթութեան համար ամէն կարելի

միջոցներ ի գործ դրած էր, բազմաթիւ վարժարաններ հիմնելով յոյն և ասորի լեզուներուն<sup>3</sup>: Եւ այսպէս, բոլոր ժողովուրդը իսաղաղիկ ու երջանիկ կ'ապրէր, ունենալով լիովին իր կարեւոր պէտքերուն ու ցաւերուն դարմանները, այնպէս որ Ս . Ներսէսի հայրապետութեան տարիներուն՝ Հայաստանի բոլոր սահմաններուն մէջ մուրացիկ աղքատ չէր երեւեր<sup>4</sup>:

Հազիւ մեռած Ս . Ներսէս, Պապ Թագաւորը կը հրամայէր ջնջել ու եղծանել բոլոր կարգերը ու կանոնները, քանդել, աւերել, կողոպտել վանքերը, կուսանոցները, հիւանդանոցները, աղքատանոցները, եւն, և «թէ ոք առնէր հանգիստ աղքատաց, մեծ պատիժս կրէր ի թագաւորէն<sup>5</sup>»: Յափշտակուեցան ու արքունիք զրաւուեցան եկեղեցիներուն ու վանքերուն ճոխ կալուածները, տասանորդները, նուէրները. լուծուեցաւ ամուսնութեան ընտանեկան կապը, հաւատացեալ կուսանք ամէն տեսակ խայտառակութեան մատուեցան, նոյն իսկ թագաւորին հրամանով, ու ամէն տեղ սանձարձակ կը տիրէր անկարգութիւնը<sup>6</sup>: Սկսան անմիջապէս «արք և կանայք պղծութեամբ, ճիւղութեամբ, պարուք դէմ ընդդէմ հարկանելով... զմեռեալսն յուղարկել<sup>7</sup>»: Խանգարուեցաւ եկեղեցական պաշտամունքը, դադրեցան տօնախմբութիւններն և ժամերգութիւնները և շատերը վերջապէս «ի հնութիւն դիւա-

1. Փ . Բիւզանդ. Պատմութիւն Հայոց. Գպրութիւն Ե. Գլուխ Լա. էջ 228.

2. Նոյն բանը ըրած էր նաեւ Ս . Բարսեղ իր թեմին մէջ, մեր Ս . Ներսէսի ծանօթ, հոգեկից և ժամանակակից հայրապետը:

3. Փ . Բիւզանդ. Գ. գ. էջ 77.

4. Անդ. Ե. Լա. էջ 229.

5. Անդ. էջ 230.

6. Անդ. էջ 228.

7. Անդ. էջ 229.